ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 13-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում մեծ հանդիսավորությամբ նշվեց Թարգմանչաց տոնը: Այս առիթով ճեմարանի սաների կողմից պատրաստվել էր հանդես-երեկույթ՝ նվիրված Թարգմանչաց տոնին:

Հանդիսությունը սկսվեց Տերունական աղոթքով, այնուհետև բացման խոսքով ներկաներին ողջունեց հանդեսի կազմակերպչուհի, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի օրիորդ Իվետա Գրիգորյանը: Օրվա խորհրդի և տոնի մասին բանախոսությամբ հանդես եկավ Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն Բարեշնորհ Հարություն սրկ. Համբարձումյանը:

Գեղարվեստական երեկույթը հագեցած էր շարականների ու երգերի կատարմամբ, արտասանություններով, ինչպես նաև թատերական բեմադրությամբ: Հանդիսության ավարտին փակման և օրհնության խոսքով ներկաներին դիմեց հնդկահայոց հոգևոր հովիվ և հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը՝ իր խոսքում անդրադառնալով Աստվածապարգև հայոց նշանագրերի արժեքին ու նշանակությանը, ինչպես նաև հորդորեց սաներին երբեք չմոռանալ իրենց մայրենի լեզուն, քանի որ դրանց շնորհիվ է, որ այսօր պահպանել ենք մեր հավատքը և մշակույթը, ունենք գիր ու գրականություն և ազգային նկարագիր:

Հանդիսությունը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ